ՀԱՅՏԱՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԾՐԱԳԻՐ

Ֆինանսավորման աղբյուր՝
ՎԶՄԲ վարկ No. 8267-AM
ՄԶԸ փոխառություն No.5387-AM

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ և ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄՄԳ-2/2016

1. Սույն հայտարարությունը տրված է ի լրումն Ծրագրի ընդհանուր գնման հայտարարությանը, որը հրապարակվել է UN Development Business պարբերականի 2014թ.-ի հուլիսի 1-ի համարում:

2. «Կրթության բարելավում» ծրագիրն իրականացնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկից և Միջազգային Զարգացման Ընկերակցությունից ստացել է վարկ/փոխառություն, և նախատեսվում է, որ այդ վարկային գումարի մի մասն օգտագործվելու է ՄՄԳ-2/2016 «Կրթական համակարգչային ծրագրի մշակում հիմնական և ավագ դպրոցների համար» պայմանագրից բխող վճարումները կատարելու համար:

3. «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն հանդիսանում է ծրագիրն իրականացնող հաստատություն և հրավիրում է իրավասու հայտողներին փակ ծրարով հայտեր ներկայացնել հիմնական և ավագ դպրոցների համար կրթական համակարգչային ծրագրի մշակման համար:

4. Մրցույթը անցկացվելու է համաձայն Համաշխարհային բանկի «Գնումներ՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի վարկերով և Միջազգային Զարգացման Ընկերակցության փոխառություններով» Հունվար 2011թ. ուղեցույցի՝ Միջազգային Մրցակցային Գնումների ընթացակարգի համաձայն, մրցույթին կարող են մասնակցել բոլոր իրավասու հայտողները, որոնք բարարարում են ստորև ներկայացված նվազագույն որակավորման պահանջներին:

Որակավորված համարվելու համար Հայտողը պետք է.

ա) լինի իրավաբանորեն գրանցված կազմակերպություն;

բ) ունենա ծրագրային ապահովման մշակման (վեբ, խաղեր և այլն) առնվազն 5 տարվա փորձ;

գ) վերջին 5 տարվա ընթացքում (2012-2016) հաջողությամբ իրականացրած լինի ծրագրային ապահովման մշակման (վեբ, խաղեր և այլն) առնվազն երկու (2) պայմանագիր՝ յուրաքանչյուրը ոչ պակաս արժեքով քան ներկայացված հայտի արժեքն է;

դ) հայտողը պետք է ներկայացնի իր ֆինանսական հուսալիությունը և պետք է ունենա իր կողմից ներկայացված հայտի կատարման համար բավարար ֆինանսական միջոցներ:

5. Իրավասու շահագրգիռ հայտողները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ում և ձեռք բերել մրցութային փաթեթը յուրաքանչյուր օր, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից, ժամը 11:00-ից - 13:00-ը և 14:00-ից - 17:00-ը, 8-րդ կետում տրված հասցեով:

6. Շահագրգիռ հայտողները կարող են գնել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը անգլերեն լեզվով «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ում գրավոր դիմումի համաձայն՝ կատարելով անհատույց վճարում 40000 ՀՀ դրամի չափով:

Վճարման ձևը բոլոր հայտողների համար բանկային փոխանցումն է՝ հետևյալ բանկային հաշվին.

Անվանում՝ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ
Բանկային տվյալներ. հ/հ 900008901010 ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան

- ԱՄՆ դոլարով վճարումների համար.
  Միջնորդ բանկ. JP Morgan Chase bank, NY
  Ստացողի բանկ. հ/հ No 001-1-010782; ՀՀ Կենտրոնական բանկ;
  Սվիֆտ հասցե՝ CBRAAM22
  Ստացող՝ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ; հ/հ 900008901010
- Եվրոյով վճարումների համար.
  Միջնորդ բանկ. Deutsche Bank AG, Frankfurt
  Սվիֆտ հասցե՝ DEUTDEFF
  Ստացողի բանկ. հ/հ No 94991200000; ՀՀ Կենտրոնական բանկ;
  Սվիֆտ հասցե՝ CBRAAM22
  Ստացող՝ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ; հ/հ 900008901010

7. Հայտերը պետք է ներկայացվեն 8-րդ կետում տրված հասցեով, մինչև 2017թ. ապրիլի 18-ը ժամը 15:00-ն (տեղական ժամանակով): Հայտերի էլեկտրոնային ներկայացումը չի թույլատրվում: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն հայտողների ներկայացուցիչների ներկայությամբ՝ 8-րդ կետում տրված հասցեով, 2017թ. ապրիլի 18-ին, ժամը 15:00–ին (տեղական ժամանակով):

Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն հայտի մրցութային երաշխիքով, որը կազմում է ոչ պակաս քան 7000 ԱՄՆ դոլար կամ համարժեք գումար ազատ փոխարկելի արտարժույթով:

8. Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 0070, Վրացյան 73
«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ, 2-րդ հարկ
Հեռախոս՝ (+374 10) 57 56 90-27
Էլ. փոստ՝ cfep@arminco.com
Վեբ կայք՝ www.cfep.am
Դիմել՝ Վարդան Պողոսյանին

Ապագա Հայտատուների ուշադրությունը պետք է սեվեռվի ա) այն փաստի վրա, որ նրանք պետք է հավաստեն իրենց հայտերում որ բոլոր ծրագրերը կամ վավեր արտոնագրված են կամ արտադրվել է Հայտատուի կողմից և բ) որ խախտումները կհամարվեն խարդախություն, ինչի հետևանքով ապագա Հայտատուն կարող է համարվել ոչ իրավասու Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի շնորհման համար: